



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

8 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի
Ա. Թունյանի

Ուսումնասիրելով Հայկ Մաշուրյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Հայկ Մաշուրյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի հունիսի 20-ին)՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61 և 63, 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը,

Կամ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը,

Կամ

Բացահայտել վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը»:

Ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատարանը, կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը, սահմանափակել է իր՝ հակընդդեմ հայցով դատարան դիմելու իրավունքը: Դիմողը նշում է, որ սույն գործի ընթացքում ինքն ընդհանրապես հնարավորություն չի ունեցել իր դեմ հարուցված հայցի վերաբերյալ ներկայացնել հակընդդեմ հայց, քանի որ իր նկատմամբ հարուցված գործի վերաբերյալ տեղեկացել է միայն վարչական դատարանի վերջնական դատական ակտն ստանալուց հետո: Եթե ինքը տեղեկացված լիներ, որ իր դեմ հայց է հարուցված, ապա օբյեկտիվորեն հնարավորություն կունենար հանդես գալ հակընդդեմ հայցով: Սակայն էապես տարբեր իրավիճակներում գտնվող հանգամանքներում օրենսդիրը սահմանել է նույն ընթացակարգը:

Դիմողը գտնում է, որ խնդրո առարկա հոդվածի դրույթների անհստակ, ոչ որոշակի ձևակերպված լինելը՝ «օրենքի որակին» ներկայացվող պահանջները չբավարարելը, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումն ընդհանրական է, չի նախատեսում ողջամիտ բացառություններ և տարածվում է էապես իրարից տարբերվող հանգամանքների վրա, որով խախտվում են անձանց՝ դատական արդյունավետ պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքները և իրավական որոշակիության սկզբունքը:

Քննության առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ §Սահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Քննության առարկա անհատական դիմումով ներկայացվել է պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով §Սահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Հայկ Մաշուրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Բավարարել Հայկ Մաշուրյանի անհատական դիմումով ներկայացված՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

Նախագահող՝

Անդամներ՝